



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԻ ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ. — ՄԱՅԻՍ

ՆՇՄԱՐՔ ԵՒ ՆՇԻԱՐՔ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես էրես 97)

Է. ԲԱՐԵՐԴ. — Պոնտոսի և Հայոց մայրաքաղաքաց միջոց և գրեթէ հաւանար հեռու երկուքէն՝ ամենէն մեծ շէնքն է Բաբերդ քաղաքն, զոր կրնամք մայրաքաղաք խաղտեաց՝ գոնէ խաղտահայոց՝ անուանել, որովհետեւ 'ի Միջին դարս մեր այսպէս սեպուած է. իսկ աւելի հին ատեն՝ կարծեմ որ մեր բնիկ Սպերոյ աշխարհին մասն էր սա, և մէկ հին մերազգի Բայ կամ Բաբ անուննա. հապետէ մը շինուած ամուր բերդ, Բայաքերոյ կոչուած այն ատեն, յետոյ սղելով՝ Բայբերդ, և յայլազգեաց Պալպուշրի վասն զի Բազրատունիք որ յառաջ քան գրբիստոնէական ժամանակս և յետոյ ալ՝ նախ Սպերոյ կողմերը ժառանգութիւն առած էին, Բաբերդն ալ անոր մէջ կը բովանդակէին. Ա դարուն վերջերն՝ Սմբատ այրաքաջն՝ ասոր ամուր բերդին մէջ ապահովցուց իր եր-

կու դստերը՝ Սմբատանոյշ և Սմբատուհի, երբ երուանգայ գէմպատերազմելու զնաց և պաշտպանելու զԱրտաշէս Բ՝ իր սանիկը : — Քաղաքը 5000 ոտքէն աւելի բարձր է ծովու երեսէն. ճորովս գետոյն այն արևմտագոյն ափանց վրայ՝ ուսկից սաստիկ վազքով կը դառնայ յարևելք, և մեծաւ շառաշմամբ զառ 'ի վայր կ'ընթանայ կամ կը թափի. անոր համար Տէլի — Ճօրուշի կ'անուանեն Թուրքք : Այս Հայոց արևմտեան հիւսիսային ծայրի առաջին քաղաքն՝ Բարիդէն երկու և կէս ժամ առաջ կը տեսնէ զարևոտ : Քաղքին ետեւէն հիւսիսաւորով բարձր լեռ մը կայ, վրան կ'երևին մնացորդք հին բերդի. արդեօք այս էր Սմբատայ դստերաց ապաստանարանը, ուսկից հանեց զիրենք երուանդ և քչեց ուրիշ բերդ մը. թէ արդեօք Յուստինիանոս կայսեր նորոգած

բերդն է : Բայց հիմայ քաղաքին բուն բերդն անոր արևելեան կողմի քարալե-
րին վրայ է . որ 'ի կէս ժՈ դարու դէմ՝
դրաւ Տուղրիլ Սուլտանին ասպատա-
կաց , վասն զի հոն գտուեցան այն ա-
տեն Յոյն և Փռակկ զօրք ալ , ինչպէս
կ'ըսէ մեր ժամանակակից պատմիչն
Լաստիվարտցի . բայց քիչ ատենէն նո-
րէն եկան և տիրեցին թուրքք . այս ցե-
ղին տիրապետութեան նշաններն ալ
կան բերդին վրայ , Գլրճ-արսլանի ա-
նուամբ արձանադրութիւն մը , առիւ-
ծի և ընծու քանդակք դրան վրայ , թէ
և յունական կամ բիւզանդական նշան-
ներ ալ կ'երևին . որք աւելի ալ շատ
էին 1829ի պատերազմներէն առաջ .
Ռուսք ոչ միայն աւրըշտրկեցին այս
տեղս ալ , այլ և միջէն հնութեան յիշա-
տակարանները վերուցին . որոց մէջ՝
ռամիկն կ'ըսէ , թէ կար նաև արծաթէ
որորան մը : Բերդին մէջէն ինչուան ճո-
րոխի ափը՝ քարակտուր ճամբայ կայ
ջուր հանելու համար , և երկու մեծ
ջրամբարաց մէջ լեցընելու . Հայաստա-
նի շատ քարաբերդներն ալ ունին այս
ջրամբարները և ճամբաները , զոր ձրաւ
պոչրս կ'անուանեն ոմանք ռամկօրէն :

Բերդին մէջ հին եկեղեցւոյ աւերակ
մը կայ , ըսին , զոր չտեսայ , և ոչ ալ
ռչոռձաւի մզկիթը , որ ատենօք քաղ-
քին զլխաւոր եկեղեցին էր . հիմայ
Հայոց ձեռք չորս եկեղեցի կայ , որ շատ
մեծ և պայծառ չեն , ոչ ալ շատ հին .
զորոց մէջ ժէ դարուն սկիզբները կը յի-
շուին Ս . Աստուռաճաճիկ և Հրեշտա-
կապետք եկեղեցիք : Քաղքին արևելա-
կողմը բարձր դրից վրայ է քրիստոնէից
գերեզմանոցը , ուր տեսայ ՊԶԶ (1437)
թուականը . ոմանք ըսին թէ ժԲ թուա-
կանաւ քարեր ալ կան , որպէս թէ
Քրիստոսի 563 թուին գրուած . ինծի
կ'երևի թէ անոնց առջի հարիւրանիշ
թիւն աւրուած և տեսուած չէ . իմ գիտ-
ցած յայտնի և ստոյգ հնագոյն Հայ
թուականն է Բագրևանդայ իւզգիլիսէի
մեծ եկեղեցւոյնը , ՉԳ որ է 634 Քրիս-
տոսի թուականն . թէ և անկէ հին չէն-
քեր ալ կան 'ի Հայս , կրնան գերեզ-

մաններ ալ ըլլալ նոյնպէս և աւելի հին :
Տաճկաց գերեզմանոցին մէջ ալ կան
աղէկ շինուածներ , ինչպէս են նաև ա-
նոնց երկու ուխտատեղի եղած շիրիմն
քաղքին արևմտակողմը : — Քաղքին
կենդանական շինուածոց մէջ նշանաւոր
է Բեհեզնոցն կամ Կերպասանոց (Պէ-
զէստէն) , չորս դմբէթով , բայց մթին
է , մէջն ալ շատ մաքուր չէ : Գլխաւոր
վաճառքն կրնան ըսուիլ արմտիք և ոչ-
խար . այս ետքինս այնչափ անուանի
սեպուած էր՝ մինչև թուրքաց մէջ ա-
ռակ ելաւ , Էրզնէճաւնըն պէղի , Քէ-
ւնխըն թուզու , Պայպուրթու թուզու .
բայց ոմանք գրգռ կ'ըսեն . խնդիրը շատ
կը փոխուի : — Բաբերդու բնակիչքն 800
տուն կը սեպուին , որոց մէկ հարիւրն
է մերազգեաց :

Ը . Բաբերդէն Կարին երթալու եր-
կու ճամբայ կայ . զոնէ քաղքէն շատ
մը հեռանալէն ետև ճամբան երկու կը
բաժնուի , միշտ դար վեր ելլելով ճորոխի
վազուածքին դէմ . որ իր աղբերականց
և Բաբերդի մէջտեղուանքը կ'ընդունի
հարաւակողմէն վտակ մը . սա իր բըղ-
խած լեռան անուամբ Կոյի (Քօփ տաղ)
կ'ըսուի . աս ջրերուն խառնուածքին
մօտ է Մաւոէկ-քէոյ կամ Չալվար մա-
ւոէկի (ըստ ոմանց Հալվա) մեծ Պղն-
ձահանք մը , ուր 500 հոգի կ'աշխա-
տէին , և տարին 20 կամ 25000 օգգա
կը հանէին , և չիզտած օգգան 15 դա-
հեկան մը կ'արժէր . փորած գուբերը
ինչուան 1400 ոտք խոր են . բայց հի-
մայ երեսի վրայ թողած են՝ ջրով լե-
ցուելուն համար . նոյնպէս ալ անպէտ
թողուած են անոր քովի հանքային ցրրա-
աղբիւրներն : — Պղնձահանքէն քանի
մը ժամ հեռու կը մնայ դէպ յարևելք՝
Մաւաւտ գեղը , որոյ անուամբ կը կո-
չուի ճորոխի առաջը , և անցած ձո-
րահովիտն ալ , Մաւաւտ տէրէսի . հարկ
է որ հին ատեն բազմաշէն տեղ մ'եղած
ըլլայ Մասատ , ուր ես չգացի , կոփայ
ճամբան բռնած ըլլալով . որու վրայ
կան իրարմէ ոչ շատ հեռու՝ Աշերակ
և Փշաշերակ գեղերը , որոց անուանք
յիբաւի փուշի պէս կը խայթեն միտ-

քը, բայց և հին յիշատակաց յոյս կուտան և անցեալ շինութեան :

Կոփ գեղն համանուն լեռան հիւսիս. ստորոտն է. այս լեռնէն որ մօտ 10000 ոտք բարձր է, ամառ ատեն կ'անցնին սրտոտ ճամբորդք. քովը, արևելակողմը, աւելի բարձր լեռ մը կայ, գուցէ 12000 ոտք և աւելի, և գրեթէ միշտ ձիւնապատ ըլլալուն համար Աղ-տաղ կ'ըսուի. ասոր արևելեան կողմն է խօշապքոռնար լեռն, ուսկից սովորաբար կ'անցնի կարաւանն Կարնոյ. թէ և այս լեռն անցքն ալ 8320 ոտք բարձր է ծովուն երեսէն. և ասոր անուամբ կը կոչուի բոլոր այս լեռանց շարքն ալ, իր ստորոտն եղած գեղն ալ, որ հարկաւ կարաւանաց իջևանատեղի պիտի ըլլայ : Այս լեռներս արևմուտքէն ինչուան փոքր Հայոց խորերը կ'երթան. արևելքէն՝ վրաստանի սահմանները, և կը բաժնեն Ճորոխի և Կուրայ ջուրերը՝ Եփրատայ և Երասխայ ջուրերէն. ասոնց ստորոտէն կը սկսի բուն Մեծ Հայոց սահմանն. Կոփայ հարաւային երեսն կը նայի Կարնոյ դաշտին վրայ. Եփրատայ առաջին կայտառ ու պայծառ վրտակներն կը սկսին եռալ :

Կոփայ գագաթէն չորս դի նայելով՝ շատ զգալի և զարմանալի կերպով մը կ'երևի ընդարձակ և ահեղ լեռնածով մը. առջի բերան՝ խառնակոյտ մը լեռանց սեւ և սպիտակ գլուխներու, բայց քիչ մ'ալ դիտելով՝ կ'որոշուին չորս գօտիք լեռանց, որոց մէկն նոյն իսկ մեր կոխածն է, Կոփայ կամ խօշապքոռնարի պարն, զոր խաղտահայոց լեռինք կոչելու է. հին Յոյնք կը թուի թէ Սկի-դիսիս կ'անուանէին զաս. — երկրորդ պարն՝ մեր անցածն է, այսինքն Սեւ ծովու ամենէն մօտի լեռնագօտին, զոր և բնիկ Պոնտական լեռինք կոչելու է. — իսկ մէկալ երկուքն՝ առջևնիս է մեր աշխարհին սեփական. մէկն՝ Կարնոյ դաշտին հարաւային եղբրքէն կը տարածուի յարևելք և յարևմուտք՝ բաժնելով զԵփրատ յերասխայ և յԱրածանոյ (Մուրատ-սու) և Այրարատեան լեռանց հետ կը խառնուի. անոր հա-

մար բուն Հայկական լեռինք կոչուելու է. — իսկ միւսն կամ չորրորդ լեռնագօտին՝ որ և ամենէն հարաւայինն՝ Եփրատը Տիգրիսէն կը բաժնէ, և Տօրոսի թին է, կրնայ Տաւրահայոց լեռինք ըսուիլ : Հայկական լեռանց երկու կողմը՝ ինչուան մէկալ մերձաւոր լեռնագօտիները՝ Հայաստանի անուանի բարձրաւանդակն է համետաձև բարձրացեալ, ընդ մէջ Պոնտոսի դարափանց և Միջագետաց անապատաձև դաշտերուն :

Կոփէն իջնելով Կարնոյ քաղաքը երթալու համար՝ այլ և այլ զիծ կրնայ բռնուիլ. մենք առաջ Սաքիոյան ըսուած գեղը հանդիպեցանք. անկէ լեռանց նեղուածքի մէջ խոտորելով հասանք տեղւոյն յարմար անուամբ կոչուած Բաւակապան գեղը, զոր գուցէ պէտք էր անուանել Կարնոյ պահակ. բայց նախնիք կ'երևի թէ դեռ աւելի խաղտեաց սահման կը տեսնէին հոս, որովհետեւ անկէ քիչ մը հեռու Սեւ ջուրի (Եփրատայ) մօտ երկու գեղերն՝ որ հիմայ Մեծ և փոքր Գաղտառիձ կ'ըսուին, կ'անուանէին Խաղտոյ — առիձ որ ըսել է խաղտեաց գիւղ. և անշուշտ կ'ուզէին իմացընել թէ այն է առաջին գեօղ խաղտեաց արևելեան սահմանին վրայ : Պզտիկ Գաղտառիձն մօտ է Եփրատայ անդրանկաց կամ առաջին երկու վտակաց խառնուրդին, և կամուրջի մը :

Թ. Այս վտակաց մէկն դաշտին արևմուտքէն կու գայ, և Սարչաւ գեղին անուամբ կը կոչուի : Հռոմայեցիք զառիկայ կարծէին բուն աղբերակն Եփրատայ. սակայն ըստ մեր նախնեաց՝ ըստուգիւ միւս՝ արևելեանն է, որ Ծաղկի գիւղին քովէն կը բղխէ. (զարմանալի պատահմամբ մը Եփրատայ զուգակիցն՝ Մուրատ կամ Արածանի գետն ալ նոյն պէս Ծաղկի գիւղի և լեռան մը քով կը բղխէ ի Բագրևանդ). Կարնոյ այս արևելեան գետաղբիւրն բուն Սեւ ջուր կ'ըսուի հիմայ, հին ատեն կարծեմ վրառուակն կոչուէր. Սարչամայ ջրոյն հետ միանալէն ետև՝ անդանազան Սեւ ջուր (Գարասու) կ'ըսուի, ինչուան որ

կարնէն ելլէ, Դերձան իջնէ և անկէ
երզնկայի կողմերը երթայ, ուր կը սկը-
սի Եփրատ (Ֆրատ) կոչուիլ: Երկու
Ծաղկէոյ ծոցերէն ծնած ջուխտակն Ե-
փրատ և Մուրատ՝ դէպ յարեմուտը դի-
մելով և Հայոց քանի մ'աշխարհներ ի-
րենց անկեան մէջ գրկելով՝ կապանայ
(Քէպան-մատէնի) քով իրարու կը
խառնուին. անկէ ետե Եփրատայ ա-
նունն կը պահուի, ինչուան որ Մեծ և
Փոքր Հայոց աշխարհները իրարմէ կը
տրեւելով, զԱսորիս ալ 'ի Միջագետաց,
ապա Ասորեստանի և Բաբելոնի մէջ Տի-
գրիսի հանդիպելով և անոր խառնուե-
լով լայն և յորդ գետ մը կ'ըլլայ, Շադ-
իւլ-Արապ. և այս անուամբ կը հասնի
ինչուան Հնդկային ովկիանոսի անկիւ-
նածայրը, այսինքն Պարսկային ծոցը.
Կարնոյ դաշտին ծայրէն և 8000' բարձր
լեռնաղբիւրէն բղխած զլուխը՝ բոլոր
անձամբը՝ այն հեռաւոր ծովուն աւան-
դելով, յետ լսելու՝ նախ Հայոց և ապա
դանազան ասիական հին ազգաց լեզու-
ները, որոնց հին և նոր բաղդիցն ալ
վկայ է: Այս տեսութեամբ՝ կարծեմ
չեմ սխալիր՝ եթէ աշխարհիս ամենէն
նշանաւոր, միանգամայն ամենէն հին
գետն ալ կոչեմ զսա. նաև սրբազնա-
դոյն գետոյ՝ յառաջ քան զՅորդանան,
առաջին և վերջին գետ կրօնական աշ-
խարհի: Վասն զի առաջին սուրբ Գրոց
մէջ Եփեմայ չորս գետերուն յիշատա-
կութեան ատեն՝ մէկալներուն համար
պէտք կ'ըլլայ նշաններ տալ, ասոր հա-
մար առանց նշանի և սահմանի՝ որպէս
թէ գետոց ծանօթագոյնն կամ թագա-
ւորն ըլլար, կ'ըսուի. « Եւ գետն չոր-
» բորդ՝ Եփրատէս ». — Իսկ ամենէն
վերջին Ս. Գրոց մէջ, որ միանգամայն
և մարդկային ցեղին պատմութեան վեր-
ջին էջն է, յետ ամենայն տեղեաց և ա-
նունաց, անցից և հոսանաց՝ անգամ
մ'ալ կ'երևի Եփրատ, միայն Եփրատ.
և միայն այն ատեն աներևոյթ կ'ըլլայ,
երբ այս բոլոր երկիրս կերպարանափոխ
ընողն, արեւելի ամենիշխան թագա-
ւորն՝ կ'երևի և կու գայ. և կու գայ նոյն
իսկ Եփրատայ լռած դադրած ալիքնե-

րուն ցամքած ճամբէն. « Գետոյն մեծի
» Եփրատայ, ցամաքեցան ջուրք նորա,
» զի պատրաստեսցի ճանապարհ թա-
» գաւորի ելիցն արևու »...: Նախնիք՝
Կարնոյ գաւառը կամ աշխարհը Կա-
տար Երկրի, երկրիս ծայր կամ գլուխ
կը կոչէին. Ս. Գիրք ահա կը ցուցնեն՝
որ այն կատարէն բղխած ջուրն՝ աշխար-
հիս բոլոր ընթացքը օրինակելով՝ անոր
վերջին կատարն ալ պիտի ըսուի. կամ
թէ այն գետոյն երկու ծայրից մէջ խոր-
հորդաբար պիտի բովանդակուի մարդ-
կութեան երկրաւոր վիճակն և ժամա-
նակն: ... Անշուշտ, ով որ բաղդ ունե-
ցեր է այս Կարնոյ եփրատաբուղխ լե-
րանց վրայ ելլել և անոնց ծործորներէն
իջած աղբիւրները տեսնել, քանի մը
ժամ Շեղջիկ, Տումլի, Պար և Ծաղկի
լեռանց ծաղկամարդ տափերուն վրայ
հանգչիլ, և քիչ մը անցեալն ու ապա-
գայն մտածել, անշուշտ այնպիսին պի-
տի ներէ իմ հոն ըրած և հոս յայտնած
այս և ասոր նման մտածութեանցս. զոր
ընդհատելով իջնենք հիմայ 'ի դաշտն
Կարնոյ:

Կը շարունակուի:

Ա. Ռ. Մ Ո Ւ Ս Ա Յ

Անմահ հրեշտակ, որ մանկական
Որորոցիս քով հսկելով՝
վարդէ պըսակ հիւսել գլխուս
Մօրըս տայիր համբոյրներով,
Քեզ՝ երկնաւոր սիրոյն թարգման,
Քեզ՝ իմ ընկեր միայնութեան,
Առ քեզ՝ Մուսայդ իմ՝ սրլանան
Բոլոր իմ տենչքն և իմ գորով:

Ի՛նչ փոյթ ոսկին ինձ մեծատան
Ի՛նչ փոյթ շրուինդըն խնջոյից,
Զաստեղաց բոյլս՝ անսպառ գանձ՝
Զծաղկունս բոլոր տըւիր դու ինձ:
Եւ մինչ աշխարհս ինձ զըլանայ
Փոշոյ անկիւն մ'իսկ՝ ով Մուսայ,
Զեռքդ ասպարէզ ինձ կը բանայ
Զոսկիածոյլ զըրունս երկնից: